

1

U - 81

63 JUN 200

Ա Տ Թ Պ Պ Ա Տ

Մ Ա Ր Ա Ս Ղ Ա Ն Տ Ա Յ

Ա.Ն.Դ.Ա.Բ.Զ


Թարգմանեց
ի Պահլաւ բնագրէն
Հանդերձ ճանօրութեամբը


Յ. Թիրեսքեսն

1909

ՆԻՒ ԵՕՐՔ

Արաքս Տաղբական Հնկերութիւն





Ա Տ Բ Պ Ա Տ

Մ Ա Ը Ա Ս Պ Ա Ց Ա Ց

Ա Ն Գ Ա Ր Զ

• • •

Թարգմանեց
ի Պահլաւ բնագըլէն
Հանդերձ ճանօրուքեամբը

Յ. ԹիրեԱթեան

1909

Դիմ Եղբակ

Արարտ Տպագրական Բնկեռուքիւն
229 Կող 29 բորդ Փողոց



6354-57

ՆԱԽԱԲԱՆ

Մեր խոստացած Շարքին երկրորդ գիրքն է այս
Ամրպատ Մարտապահութ:

Ասրագատը, որ մինչև ցայսօր մեծ յարգանքի եւ դրեթէ պաշտաման առարկայ է ֆարախներուն ¹ մէջ, Շապուհ Բ. Ասամնեանի օրով ² մեծ Գենեպետ (Գառատուր = دستور) և մեծ վէզիր էր, գերահռչակեալ իւր գիտութեամբ՝ խոհականութեամբ և առաքինութեամբ:

Սա՝ տեսնելով Մազդեզանց գենի մէջ, տգիտութեան և մոռացութեան երեսէն, թէ ի հաւատալիս և թէ յարաբողականին, մտած խանգարմունքը, հաւանեցոյց զարքայն իւր հզօր աղդեցութիւնն ի գործ գընել մաքրելու կրօնքին սրբութիւնը եւ Զրադաշտեան պարզ և գծիտ սկզբունքները եկամուտ աղճատանքներէն, և վերածել դաւանանքը և պաշտամունքը իրենց նախնի պարզութեանը :

Ուստի — խնամով աչքէ անցան Աւեստայի բնագերը և փաղէնոտ և Պահլաւիկ մելինութիւնները, ուզ-

1. Փարսի ժողովուրդը Զբաղաշտի հետեւղաց վերջին մասրություններն են որոնց մէկ փափր մասը (15000 ի չափ) Պարսկաստան (Ելտ և Քերման) կը բնակի և մասրություն (85000 ի չափ) Հնդկաստան, Կուզարաթի նահանգը:
 2. Գ. գարուն (Յ. Ք.) երկրորդ կիսուն (350), Եղնիկէն (440) զբեթէ դար մ'առաջ:

զուեցան և ծշղուեցան բոլոր սրբազան մատեանները, մերժուեցաւ Մամիի աղանդը որ Արտաշիր Ա. ի օրով երկցած էր և նոր փայլով պայծառացաւ Մահարատի¹ եւ Զարդուշտի վեհ-Դենը, աւելի լայն եւ թոյլատու սկզբանքներով և հայեացքներով,² ինչպէս կը տեսնենք Յազկերտ Բ. ի վլուրկ Հրամանատարին, Միհր-Ներսեհի հրովարտակէն զոր պահած են մեզ մեր երանաշնորհ նախնիք Ղազար Փարպեցի և Եղիշէ եւ որ անգնահատելի գանձ մը համարուած է այսօր յաշս եւ բռպացի գիտնոց:

Ատրպատէն մեծահատոր գրքեր չունինք, գուցէ կորսուած լինին, բացի այս հակիրճ Խրատականէն որ մեծ յարդ կը վայելէ պահաւ մատենագրութեան մէջ և որ այլ և այլ եւրոպական լեզուներով թարգմանուած է:

Ուռաջին հնագոյն ձեռագիրը որ գտնուած է, որոյ

1. Մահարատը ունիկ անձնաւորութիւն մ'է որոյ ոչ գոյութեան և ոչ ժամանակին վրայ որոշ բան մը կը գիտցուի: Պարսկական աւանդութիւնը ցեղազատական Հարստութեանց Ա. շըրջանին առաջին չիմնադիրը կը դնէ զայն, անդրպատմական խորագոյն խաւերու մէջ սուզելով (Խարնամակ 73): Իսկ Զարդուշտը, որոյ մասին ալ ոչ նուազ անհաստատ են պատմագէտք, ու մանց մինչեւ իսկ ուրանալով անոր գոյութիւնը, կը կարծուի սուվորաբար թէ Փիշտատեան Գուշտասպայ (Վշտասպ) օրով կ'ապրէր, նախ քան զիմնարկութիւն ի Կիւրոսէ՝ Աքեմենեան Պետութեան, ոչ նուազ քան 1200 տարի նախ քան դիրիստոս:

2. Ազգուելով անշուշտ մինչեւ աստիճան մը, Քրիստոնէութենէն որ սկսած էր արդէն ծաւալի և զօրանալ:

մի օրինակն ալ, երևի, Միւնիխի մատենագարանին մէջն է, գրուած կը կարծուի վերջին Յազկերտի վերջին տարիներու մօտ, այսինքն 651 թուականներուն, ասկէ գրեթէ 1258 տարի առաջ:

Ատրպատի առաջին տպագրութիւնը եղաւ Պոմպայ, Հրպետ Շէհրիար-Ջի Տատապհայի ձեռամբ, 1869 ին, կուզերաթ թարգմանութեամբ առընթեր:

Յետոյ մի երկրորդ տպագրութիւն երկցաւ ի ձեռն Դաստուր Փեղութան-Բահրամ-Ջի-Սանջանայի, կուզերաթ և անգլերէն թարգմանութիւններով:

Սոյն մեր օրինակը երրորդ տպագրութիւնն է, կարծենք, որ կատարուած է ի ձեռն Դաստուրան-Դաստուր Խօտաեար-Շահրիարի, հանդերձ զենդ ձայնագրութեամբ և փարսի թարգմանութեամբ, ի պէտո Զրադաշտեան ուսանողաց, ինչպէս զեկուցած ենք կարնամակի նախաբանին մէջ:

Այս օրինակին եւ առաջնորդին հետևելով է որ մենք մեր թարգմանութիւնը կատարեցինք Պարսկաստան և լուսաբանելի կէտերուն վրայ կարծիքներ փոխանակեցինք. նոյն ինքն Խօտաեարին հետ, ի Շիրազ, երբ նա Հնդկաստանէն իւր բնագաւառը Եղտ կը գտնար:

Մեր այս նոր աշխատութեան ուղղութեանը մասին նոր ըսելիք մը չունինք, այն է ինչ որ կարնամակին մէջ գծած և հետևած ենք: Մեր կէտ նպատակին է Պարսկահայ և հայ լեզուաց արենակցութիւնն ի յայտ ածել. նոյն հասարակ եղբները հանելով իրարութիմաց, եթէ կան լեզուին մէջ, իսկ եթէ չկան յօրին-

ուած, յօրինել, եթէ տարերքը և օրինակները կան:

Նմանութիւն կամ նոյնութիւնները աւելի բացուրոց ընծայելու համար, բարեկամաց ոմանց թելադրութեան անսալով, նոյն երկբարբառիկ եզրները ընդգըծել որոշեցինք, բայց գիտել կուտանք որ այն ընդգըծեալները բոլոր հայապարսիկ գանձը չեն ներկայացըներ. եթէ այսպէս ընէինք, գոնէ կէսէն աւելին կարծենք թէ պիտի պահաւանար. օրինակին մէջ գանուած հասարակ բառերը միայն գործածեցինք, իսկ ուր ուրեք որ օրինակին մէջ արամական տարրով մը անցած է, ոնենալով հանդերձ պահաւական համարժէք ձայնը, մենք զայն չնշանակեցինք և հայ սովորական բառը միայն գործածեցինք այն տեղ:

Թէ որչափ հիմնաւոր, սոսոյդ կամ սոսուգամերձ են մեր հայեացքները այս հանդիպագրութեանց մէջ, այս համառօտութեան սահմանէն դուրս է ասկէց աւելի ծանրանալ անոնց վրայ: Վերլուծական մի այլ աշխատութեան մէջ զոր յամաց հետէ ձեռնարկած ենք պատրաստել, առիթ ոնենանք թերեւ աւելի ընդարձակօրէն խօսելու այդ բոլորին վրայ:

Վերջացնելու համար ըսենք թէ եւրոպական թարգմանութիւններէն մենք միայն երկուքը տեսանք, Բելճիացի գիտնական Փրօֆ. Հառլեզին գաղղերէնը և Դաստուր Փեշութանի անդգերէնը որոնց բազգատաւ կան գլխաւոր կէտերն ալ նշանակեցինք առ տեղեաւ:

Այս բաղդատութիւնը վերին աստիճանի շահեկան երեցաւ մեզ, օրինակաց տարբերութիւնները մատնանը ելուսի հանդերձ, ի վեր հանելով մանաւանդ հայ լեզ-

ուի առաւելութիւնը և անմրցելի յարմարութիւնը արկելեայ և ի մասնաւորի պարսիկ գանձերու փոխադրութեան:

Եւրոպացին, որչափ ալ գերածայրեալ լինի գիտութեամբ եւ հմտութեամբ, կը տեսնենք որ դարձեալ բան մը կը պակսի իրեն, իշրացումը (assimilation): Համարձակութիւն է թէն, բայց կրնանք վըստահաբար ըսել թէ Արևելքը արևելքցին միայն կը հասկնայ և կ'ըմբռնէ և ալ կը ցոլացնէ, եթէ մանաւանդ հայ լեզու մըն ալ ունի ձեռքը՝ միջոց և գործի:

Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

1 Մայիս 1909

Նիւ Եօրք.

ԱՏՐՊԱՏ — ՄԵՀՐԱՍՊԱՆՏԱՅ

ԱՆ Դ Ա Ր Զ

ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

ԱՅՍ (Է) Անդարձ (ա) Անուշակ — Ռուսն (բ)

ԱՏՐՊԱՏ — ՄԵՀՐԱՍՊԱՆՏԻ

Ա.

1. Այս յայտնի¹ (է) որ Ատրպատը իւրազատ² (գ) որդի չունէր. հուսկ ուրեմն Աստուծոյ ապաստանցաւ:³

Եատ չանցաւ Ատրպատին որդի մի եղաւ զոր, Զարդուշու-Մփիտմանի (պէս) բարեհեմ (գ) (տեսնելով),⁴ Զարդուշու անուանեց և ըստու. — «Արի, որդեակ իմ, որ քեզ հրահանեգ համոզեմ:⁵ (ե)

ա. Փեշութան կը յաւելու «և հրահանգ»:

բ. Անմահ հոգի (Տե՛ս Կարնամակ եր. 70 և 133):

շ. Իւրածին:

Դ. Բարեբարոյ, ուղղաբարոյ = حی سوت (سونت) կամ حی سوت (سونت) կամ ըստ զի մ' = բարք): Այս արմատը առւած է մեր «դժխեմ»ը և «խոչեմը» որպէս հետեւղութեամբ կազմեցինք այս «բարեհեմ»ը պարսկահայ հասարակ եղբը երևցնելու համար:

ե. Աւանդեմ, ուսուցանեմ,

2. Որդեակ իմ, բարենդաձ (ա) լեր եւ մի զնապնդաձ,^{6(բ)} քանզի մարդիկ մինչեւ յաշիտեան ժամանակ չեն կեար,⁷ եւ մարդուն համար՝ ինչ որ հանդերձելոյն կը հայի վայելչագոյն⁸ է:

3. Անցածը մոռցիր և այն որ (գեռ) եկած չէ, (անոր համար) հոգ վիշտ մի կրեր:⁹

4. Իշխան և ասրտար մարդու հետ վես և վատան¹⁰ մի վարուիր:

5. Ինչ որ քեզ համար անբարի է՝ դու ալ ուրիշի մի աներ:

6. Մեծաւորներաւ և բարեկամներու հետ համաձայն գնաւ:

7. Անձդ ծառայութեամբ մարդու մի ապսարուեր:¹¹ (գ)

8. Ով որ քեզի հետ ցասմամբ¹² և քինով կը վարուի՝ անկիէ հեռի կաց:

9. Միշտ և յամենայն ժամ յոյսդ Աստուծոյ վրայ գեր և զնաւ քեզ բարեկամ ըրէ որ քեզ շահաւէտ լինի:

10. Աստուծոյ եւ հրեշտակաց մասին ջերմեռանդ եւ կենապապար (գ) լեր:

11. Կանանց գաղտնիք մի բանար:

12. Ինչ որ կը լսես՝ լսէ,¹³ բայց մի տարածեր:

13. Կինդ և զաւակդ անհրահանգ մի ձգեր, որպէս զի (ապա) հոգ և ծանր վիշտ չկրես և չփաշամանես:

ա. Բարեխոհ:

բ. Զարախոհ,

շ. Մի ենթարկեր:

Դ. Անձնուէր:

14. Անձահ մի խնդար:
 15. Յետոյ և յառաջ՝ պատասխանի 15 պայմանաւ (ա)
 առւր:
 16. Բնաւ ոչ ոքի մի ափսոսար: (բ)

Բ.

17. Դժակահ (գ) մարդու հետ համհարզ (դ) մի լինիր:
 18. Ցաւկու մարդու հետ համասհ մի լինիր:
 19. Շոգմոգ մարդու հետ մի համախոնիր:
 20. Շատ ընչաւէտ մարդու հետ համխոր (ե) մի լինիր:
 21. Արբեցող մարդու հետ համխոր մի լինիր:
 22. Վատզոհար և վատատոհմ մարդու հետ աշանդ
 մի տար առներ, վասնզի ծանր վաշի պարու է
 տալ և յարաժամ դրանդ շուրջը կը գեգերի եւ
 հանապազ դրանդ քով պատզամքեր (դ) կը դնէ եւ
 քեզ անկէ մեծ զեսն կը հասնի:
 23. Գժակին¹³ մարդու օգնութեան մի գիմեր:
 24. Նախանձու մարդու ինչք մի ցուցներ:
 25. Մեծամեծաց առջե սուտ վծիռ (է) մի տար:

ա. Զափելով կշռելով:

բ. Մի ծաղկեր:

գ. Խակ, անգէտ (Տես Կարնամակ, եր. 58):

դ. Ընկեր, զովող, խորհրդակից:

ե. Աեղանակից:

զ. Լրտես:

է. Բան, վկայութիւն:

26. Քսու և դրուժան մարդու խօսքին ականջ մի կալսեր:
 27. Մարդ որ պատուհանես,¹⁷ ոխակալութեամբ մի
 վարուիր:
 28. Ուրուի¹⁸ հետ պայքար մի մղեր:
 29. Մարդ մի գանակոծեր:
 30. Գահու (ա) համար մի կագիր:
 31. Աղատերես, (բ) կարական, (գ) խելացի և խոհեմ¹⁹
 մարդու հետ համփուրս (դ) և մտերիմ լեզ:
 32. Պատերազմի մէջ ծանր բեռ ոճենալէ շատ զգու-
 շացիր:²⁰
 33. Քինաւոր հզօր մարդէ հեռի կաց:
 34. Գպիր մարդու հետ մի թշնամանար:
 35. Լեզուագար մարդու գաղտնիքդ մի բանար:
 36. Գիտուն մարդը յարդէ, անկէ բան հարցուր եւ
 ըստծը լոէ:
 37. Բնաւ ումեք սուտ մի խօսիր:²¹
 38. Ամնալ չգիտցող մարդէ բան մի առներ:
 39. Աչագահ (ե) մարդու մօտ գրաւ մի գներ:²²
 40. Ոչ իրաւի ոչ սուտի, բնաւ մի երդնուր:²³
 41. Եթէ տուն տեղ լինել կամիս, նախ ապրուսոդ 24
 ապահովէ: (դ)
 42. Քո կինդ գու ինքդ դտիր:

ա. Բարձ, պաշտօն, տեղ:

բ. Անկէղծ, աննենդ, ճակատը բաց:

գ. Բանդէտ, բանիմաց:

դ. Համ և փուրուէն (արմատ փուրսի է) խօսակից լինել:

ե. Աչքը չվերցնող: նախանձու:

զ. Տառարար. «մէջ տեղ բեր»:

43. Եթէ կարողութիւն ունենաս, նախ ջուր և վարուցանի յուռթի գետին գնէ, փասնզի, եթէ թերք ալ չտայ, բուժը²⁵ տեղը կը մնայ:
44. Որչափ որ կրնաս, խօսքով մարդ մի վիրաւորեր:
45. Մարդոց քեն կապել և զեան հասցնել մի ջանար:
46. Հարստութենետ կրցածիդ շափ առատորիւն ըրէ:
47. Բնաւ մարդ վրիպելու (խաբելու) ետևէ մի լինիր որ՝ դու ալ շատ ցաւ չ'կրես:
48. Առաջաւոր պատուաւոր մարդը մեհարէ եւ անոր խօսքը ընդունէ:
49. Աղդականներէդ եւ բարեկամներէդ զատ ուրիշէ փոխ մի առներ:
- | 50. Ամօթխած կինը յարդէ եւ զայն ամուսնացուր խելացի և բանդէտ մարդու հետ, զի խելացի և բանդէտ մարդը այնպէս է որպէս երկիր բարի զոր տոհմատրելով (ա) գումակ գումակ բարիքներ անկէ կը քաղեն:
51. Աշխարախոս լեր:
52. Առանց անդամելու (բ) սոհուն (գ) մի խօսիր:
53. Առանց (օրինական) ձևակերպութեան՝ (մարդու) փոխ մի տար:
- | 54. Խելացի և ամօթխած կինը սիրէ և կին առ:
55. Խոհեմ, ուզզամիտ և կարական մարդը, եթէ շատ ալ չքաւոր լինի, փեսայ ընդունէ, (քանզի) Առաջագրին «տ ո չ մ»ը պահելու համար այսպէս դրինք «սերմանել» ի մտօք:
- բ. Խորհելու (Հ. 2, Ծան.):
- դ. Խօսք:

- տուծմէ կոկայ անոր հարստութիւն:
56. Մեծ տարիք ունեցող²⁶ մարդը մի ախտար, (ա) փանզի դու ալ պիտի ծերանաս:
57. Յանցաւոր բարձրաստիճան մարդը զնդան մի դներ: Ծնարեալ և վզորի և ոչիմ մարդը բանտի զնդանպան կարգէ:
- Ք.
58. Եթէ որդի ունենաս, մատաղ հասակէն դպրաստան տուր քանզի դպրուքիւնը աշաց ուղևորքիւն է:
59. Կծու խօսքը շրջանկատութեամբ խօսէ, քանզի խօսք կայ որ խօսելը լաւ է. և կայ ալ որ՝ լուել. և այն որ լուելի (է), լաւագոյն (է) քան զայն որ խօսելի (է):²⁷
60. Ջատոսնուն(է)²⁸ մարդը պատգամիրեր ըրէ:
61. Ստորին մարդը ստորար(բ) մի գիտնար եւ վաշերական (գ) մարդը իւր արժանեաց համեմատ պատուէ:²⁹
62. Ճ'արպով (դ) խօսէ:
63. Ճ'արպախոս լեր:
64. Բարի խորհուրդներ ունեցիր:
65. Ինքզինքդ մի գովեր թէ բարեգործ ես: 30
66. Մեծամեծաց եւ իշխանաւորաց առջեւ յանցաւոր մի լինիր:

... Արի ծաղրեր: - բ. Վաստահելի: - գ. Արժանահաւատ: - դ. Օձուն, համեղ:

67. Արենաս (ա) և բարի մարդէ տոնուն (ը) հարցուք:
 68. Գող մարդուն հետ տուրեառ մի լներ, խախուռ
 համարէ այնպիսիները:
 69. Դժոխիքի երկիւղը (միտք բերելով) պատուհասե-
 րու (գ) մէջ շրջանիատ (գ) լեր:
 70. Ամէն մարդու (և) ամէն բանի վսեար (ե) և վասա՛
 մի լինիր:

Դ.

71. Բարենրաման³¹ (ի) լեր որ բարենսիհ լինիս:
 72. Ապավեսա լեր որ ապերկիւզ լինիս:
 73. Սպասուար (է) լեր որ բարեաց արժանի լինիս:
 74. Մնկեղծ լեր որ վաւերական (ը) լինիս;³²
 75. Թաստունուն³³ լեր որ ստուար (թ) լինիս:
 76. Խոնարհամիտ լեր որ բարեկամ շատ ունենաս:
 77. Բարեկամ շատ ունեցիր որ խոսրավ³⁴ (ժ) լինիս:
 78. Խոսրով լեր որ բարեկեաց լինիս:
 79. Բարեբաստ և դենասէր լեր որ սուրբ լինիս:
 80. Խղճակորձ³⁵ (ժա) լեր որ արքայութեան (ժառան-
 գորդ) լինիս:
 81. Առատասուր լեր որ զերեզմանիկ³⁶ (ժթ) լինիս:

ա. Տարիքոս: - բ. Խորհուրդ: - գ. Մարդ պատժելու մէջ:
 դ. Չափաւոր: - ե. Խիզախ, յանգուգն: - զ. Տուած չըսա-
 մաններուզ մէջ արգար: - է. Երախտագէտ: - ը. Ար-
 ժանահաւատ: - թ. Հաստատուն, անսասան: - ժ. Բա-
 րիանունն, բարեհամբաւ: - ժա. Խղճահար: - ժթ. Եր-
 կինքի արժանանաս:

Ե.

82. Ուրիշի կինը մի վրիպեր (ա) որ հոգւոյդ մեծ վր-
 նաս կը լինի:
 83. Մնարդ և ապաշնորհ³⁷ մարդու երես մի տար,
 զի ապասահատոյց (ը) չլինիր:
 84. Յասեամբ և քենով հոգիդ մի նուսասացներ:
 85. Երէ (գէպ լինի որ) գործես և խօսիս, ձարպով (գ)
 և խոնարհութեամբ³⁸ վարուէ, քանզի խոնարհե-
 լով քամակդ չկոտրիր և ձարպով խօսելով բերա-
 նըդ չհոտիր:
 86. Գուզդ գէմքով խօսքի մի սկսիր:
 87. Երէ հանգաման (ը) նստիս,³⁹ (դ) դժական (ե) մար-
 դու քով մի նստիր որ (դու ալ) դժական չկար-
 ծուիս:
 88. Հանգամանի մէջ, ուր որ ալ նստիս, վերերը մի
 ընտրեր, որ քեզ այն տեղէն չվերցնեն եւ ցած
 քշեն:
 89. Աշխարհի ընչից և հարասութեան մի վատահիր,
 քանզի աշխարհիս ինչքը և ստացուածքը այնպոյն
 համայնակ (են) զիզոյն (զ) թռչուն որ այս դրախ-
 տեկ (է) այն դրախտին վրայ կը թառի և ոչ միոյն
 վրայ չկենար:
 90. Հանդէպ հօրդ և մօրդ ակնածոս և հլու և ձրա-
 ա. Գլխէ մի հաներ: - բ. Երախտագէտ: - գ. Քողզըր լեզ-
 ուաւ: - զ. Ակումբ, ժողով (نچէ) ե. Տիմար, ա-
 պիմակ: - զ. Այնպէս . . . որպէս: - է. Ծառ:

- մանահաց լեր, զի մարդ որու հայրը և մայրը
կենդանի են,⁴⁰ այն համայնակ (է) զիգոն առիւծ
յանտառի (որ) բնաւ ուստեղ երկիւղ չունի և այն
որ հայր և մայր չունի այն համայնակ է զիգոն
այրի կին զոր կը կողոպտեն եւ ինք բան մը չը
կրնար ընել և ամենուն քով նա անարդ համար-
ուած է:
91. **Աղջիկը խելացի և բանգէտ մարդու տուր,** քան-
զի խելացի և բանգէտ մարդը այն համայնակ է
զիգոն բարի գետին որ, երբ տոհմ(^ա) ընդունի
բազում արդիւնք կը բերէ:

Զ.

92. **Երէ կը ցանկաս որ բնաւ ումեքէ թշնամանք(բ)** չը
լսես, դու ալ բնաւ ումեք թշնամանք⁴¹ մի գներ:
93. **Թունդ և լեզուազար մի լինիր,** վասնզի բունդ և
լեզուազար մարդը այն համայնակ (է) զիգոն կը-
րակ անտառը ինկած որ համակ թռչուն և ձուկ⁴²
կ'այրէ, ևս և գազանները:
94. **Այն մարդու հետ որմէ իւր հայրը մայրը վշտա-
ցած եւ գժգոհ են՝⁴³ համքար(գ) մի լինիր որ-
պէս զի դատի, գուպարի(գ) չմատնուիս և մարդ
քեզի բարեկամ և պաշտպան չգտնուի:**

ա. սերմ: - բ. دشنام : - զ. Համարուեստ: - դ. Հոս'
կագ, կոփ, նեղութիւն:

95. **Վատ նենգով^{44(ա)} և ամօթով հոգիդ դժոխքի մի
ապապարեր:**
96. **Երկդիմի խօսք մի խօսիր:**
97. **Հանգամանի մէջ, տեղ որ որոնես, դրոշի մօտ
մի նստիր, որ քեզ բազում վիշտ չպատճառէ:**

Է:

98. **Թեթեսուն լեր որ ռոշնակն⁴⁵ լինիս:**
99. **Վազայարոյց լեր որ յաջողկար լինիս:**
100. **Հին բշնամին նոր բարեկամ մի ըներ, քանզի հին
բշնամին այն համայնակ (է) զիգոն մար(բ) սեաւ
որ հարիւր տարի քենը չմոռնար:**
101. **Հին բարեկամը նոր բարեկամ ըրէ, քանզի հին
բարեկամը այնգոյն համայնակ (է) զիգոյն հին
գինի որ որչափ հնանայ այնչափ ախորժահամ
և արքայավայել կը լինի:**
102. **Սատուծոյ փառք տուր եւ սիրտ անդորր պահէ
որ Աստուծ աւելցնէ քու յաջողուածդ:**
105. **Դեմպետ մարդը մի անարդեր քանզի քաղաքին
պահապանն են անոնք և աշխարհայնոց մեծ բա-
րեզի կը հասցնեն:**

ա. Ոնչամարձակութիւն, անտեղի ամշկոտութիւն:
բ. Օձ:

թ.

104. Եւ քեզ ասեմ, որդեակ իմ, որ գերազոյն բարի,
մարդուս համար, խրառ (իմաստութիւնէ), վասրե-
զի երե, փարզա՛սո, (ա) հարսութիւնը կորսուի
կամ պաձարը սատկի, սակայն խրառը կը մնայ:
105. Դենը հասուասուն պահէ, քանզի (դեն) գիտու-
թիւնը հաճոյք մեծ (է) եւ (միանդաւայն) մեծա-
գոյն յոյս երանաւէտ կենաց:
106. Յարաժամ հոգւոյդ համար մտածէ:
107. Անունի (համբաւի) համար գործդ (վաստակդ) մի
վտանգեր:
108. Չեռքդ գողութենէ և ոտքդ անգործութենէ և միտ-
քըլ ապառում (բ) խորհուրդներէ հեռի պահէ, վա-
սընզի որ բարի կը գործէ պատիժ (գ) կընդունի և
ան որ վնաս (դ) կը գործէ պատուհաս (ե) կընդունի:
109. Ով որ իր թշնամոյն հոր կը փորէ, ինք մէջը
կ'իյնայ:
110. Բարի մարդը երջանիկ կը լինի, իսկ չարը մեծ
վիշտ և անդուն կ'ունենայ:
111. Մանկամարդ կնոջ հետ ամուսնացիր:
112. Գինի պայմանաւ (դ) խմէ քանզի ով որ գինի

ա. Ասուած մի արացէ, մի գուցէ:

բ. Բնագիրը وارون اورون

գ. Հոս վարձ կը նշանակէ:

դ. Մեղք, յանցանք:

ե. Պատիժ: - դ. Չափով:

ա(ա)պայման (ա) խմէ բազմադիմի վնասներ ան-
կէ յառաջ կուգայ:

113. Որչափ ալ քաջ մարթով⁴⁶ (բ) լինիս, շոշտ
ձեռքդ մարի մի զարներ որ քեզ չխաճնէ (խայ-
թէ) և տեղն ի տեղը (խկոյն) չմեռնիս:
114. Երէ իսկ քաջ լողալ գիտնաս, շոշտ շոշտ սուամ-
բակ (գ) յուրերը մի մտներ որ առ տեղեաւ չմեռնիս:
115. Ոչ մէկ կերպով ուխտադրութ մի լինիր որ քեզ
անարդ վիճակ չչանի:
116. Ուրիշի ստացուածքը մի կապտեր եւ քուկինիդ
խառներ, քանզի քու ունեցածդ (ալ) անտես եւ
անյայտ կը լինի, նաեւ այն ինչքը որ դոն քու
աշխատանքովդ վաստկած չես, եթէ քուկինիդ
հետ խառնես . . . ;⁴⁷
117. . . . մի ուրախանար, վանզի մարդ այնպոշնակ
է զիզոն տիկ պատուոյց, (դ) երբ պատը դուրս
ելլէ, մէջը բան չմնար:
118. Մարդիկ անգոյն համայնակ զիզոյն (երեխայ)
շիրխորսկ (ե) որ, ինչ ունակութիւն որ ստացած
է կը պահէ:

ա. Բնագիրը ապառման: Հին տը երբեմ մնացած է
մեր մեջ, (զոր օրինակ պատկեր), երբեմ թեթեցած
'ի յ, զոր օրինակ պատման = պայման: - բ. Օձի
թողիչ: - գ. Յաղթ, մեծազանգուած: - դ. Պատ =
փուք (պատիպատ): - ե. Խորնկեր:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՆԳԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԱՆԳԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆ

Թ.

119. Ամհումայ օրը գինի խմէ և ուրախութիւն ըրէ:
120. Բահման օրը պատուա՞(ա) և ձամակ նոր պատմուակ: (բ)
121. Մրտաշանիշտ(գ) օրը կրակասուն այցելէ:
122. Շահրիվար օրը ուրախ լեր:
123. Սպանդարամետ օրը գետինը վարզէ: (տ)
124. Խորդատ(ե) օրը չուր հանէ:
125. Ամորդատ օրը դար ու դրախտ տնկէ:
126. Դեպատր օրը սար լուս և մազ և եղունդ վիրա:
127. Ատր օրը ռահ գնո՞ւ և միս մի եփեր, զի վնաս(զ) մեծ կը լինի:
128. Աբան օրը ջրէ ժուժկալէ եւ ջուրը մի տանջեր:
129. Հուր օրը կոտակը(է) դպրաստան խրկէ որ դպիր և իմաստուն լինի:
130. Մահ(իկ) (ը) օրը գինի խմէ եւ բարեկամաց հետ զուարճացիր և Լուսին-Տիրոջմէ խնդրաւածք ըրէ:
131. Տիր օրը կոտակը նետաձգութեան և նուարդի⁴⁸(թ) և ասպավարութեան(ժ) հրեշտակէ: (ժա)

ա. Պատառ հոս ընդհանուր առմամբ ո և է հանդերձ կը նշանակէ: - բ. Հագիր: - գ. Ո.յո է նաև մեր Ո.րտաւազ գըլ: - զ. Հերկէ: - ե. Արնայինք հայացի ձայնով Հրատառատ ալ ըսել ըստ օրինակի Տըր դատի և Մի հրդատի: - զ. Վնասը միշտ մեղք և յանցանք նշանակութեամբ առնաւոծ է:

է. Մանուկը: - բ. Լուսին: - թ. Կոկւ: - ժ. Զիսպարժութիւն: - ժա. Խրկէ:

132. Գուշ օրը հորիժի խնամք տար և եղը վարի վարժեցուր:
133. Գեւմեար⁴⁹ օրը սար լուս, մազ և եղունդ վիրա և որթէն խաղող քաղէ և կարասը(ա) լից որպէս զի լաւ լինի:
134. Միհր օրը երեկ մէկէ մը զրկանք կրած ես, Միհրին գէմը կաց ու դատվար(բ) խնդրէ եւ լաց և պատէ:
135. Մրուշ օրը Մուրբ Մրուշէն հոգւոյդ աղաստութիւն խնդրէ:
136. Ռաշն օրը Ժամանակը թեթև (յաջող) է, ինչ զործ որ կ'ուղես ընել՝ (նայէ օր) բարի ըլլայ:
137. Փերուարդին օրը երգում մը ըներ և այն օրը մաքուր ոգւոց յազ(գ) կատարէ որպէսզի աւելի գոհ մնան քենէ:
138. Վահարամ օրը տան եւ բնակարանի բունը գիր որ շուրջ վերջանայ(դ) և ռազմի և ճակատի մտիր որ պերոզար(ե) գառնաս:
139. Բրամ օրը կին առ և արտ վարէ և զրօսանք ըրէ և դատարաց առջի ել որ պերոզութեան և բախտաշրութեան համեիս:
140. Պատ օրը վասարանութիւն ըրէ և նորոգ կար(դ) մի պատուանդեր: (է)
-
- ա. Գլուխ: - բ. Դատ, դատաստան: - զ. ڦڻ:
- զ. Եւս և վախճան = فرجام
- է. Յաղթութիւն = فیروزى - զ. Գործ: - է. Ջենարկել:

141. Դերագեն օրը ինչ գործ որ ունիս ըրէ, կի՞ն ա-
ծէ տուն (ամուսնացիր) և հեր և եղունդ վիրա
և ձամակ զգեցիր:
142. Դեյն օրը վնասակար կենդանիներ սպաննէ:
143. Արտ օրը ամէն նոր բան գնէ և տուն տար:
144. Աշտառ օրը ձի և եղ և չորքոտանիները զուգա-
ւորէ որ դիւրածին լինին:
145. Երկնից օրը հեռու ռան գնա որ ողջամբ վերա-
դառնաս:
146. Զեմիատ օրը գեղ մի ընդունիր:
147. Մարասպանդ օրը ձամակ աւելցուր, կարէ և հագիր
և կի՞ն ած որ սրամիտ և բարի զաւակներ սերին:
148. Անիրան օրը հեր և եղունդ վիրա՛ և կի՞ն ած որ
անուանի զաւակներ սերին:

Ժ.

149. Երբոր յաջողութիւն ունենաս՝ շատ մի ուրախա-
նար, եթէ ձախորդութիւն պատահի՝ շատ աւելի
մի վշտանար, վասնդի յաջողուածը ձախորդուածի
ժամանակ (ալ ունի) և ձախորդուածը՝ յաջողուա-
ծի. և բնաւ վերելք չկայ որ շեպ չունենայ իրմէ
առաջ, և շեպ՝ որ վերելք չունենայ իրմէ ետքը:
150. Խորտիկիդ որկրաժետութեամբ մի ուտեր:
151. Եւ ամէն խորտիկէ մի ճաշակեր և վզրկաց կոչուն-
քին և խնձոյքին շուտ շուտ մի յաճախեր որ չը
նեղուիս:

152. Չորս բան կայ որովք մարդ դժախանութեամբ
իւր անձին կը վնասէ. 1. բռնութիւն ընել. 2. մե-
ծամիտ աղքատ (լինելով) ուրիշի հետ նուարդի(ա)
ելլել. 3. չարահնմ(բ) ծերը մանկամարդ կնոջ հետ
ամուսնանալ. 4. երիտասարդ՝ պառաւի հետ ա-
մուսնանալ:
153. Մարդ բարեկամը բարեմտութենէն՝ խոհեմուրե-
նեն և բարի համբաւէն պէտք է ճանչնայ:
154. Եւ քեզ ասեմ, որդեակ իմ, որ մարդուս համար,
բարեաց մէջ, խրառը քան զամենայն ի վեր է:
155. Անուշակ ուրուցն(գ) լինի Ատրպատ — Մեհրաս-
պանդ որ այս Անդրածը ըլուտ եւ այս հրամանը
տուաւ: Այդգոյն եղիցի:

ա. Պայքար:

բ. Չարաբարոյ:

գ. Անմաշ հոգի:

ՕԱՅՈԹՈՒԹԻՒՆՔ

1. Այս բառը պահլաւ բնագրին մէջ «փեյտակ» կամ փակ* ա ով «փայտակ» կը կարդանք, որ և անցած է նոր պարսկերէնի: Փ եւ չ (և թաւ Յ) ձայներուն յաճախ իրերափոխութիւնը առաջի աչաց ունենալով հաւանականութենէ հեռի շթուեցաւ մեզ մեր «յայտ»ն ալ սրա մի յեղազանեալ ձեւը համարիլ, ենթագրութիւն որուն ոյժ կուտայ այն միւս և ձևն ալ որ կը գտնուի նոր պարսկերէնի մէջ և որ անցման միջին եզրը կուտայ գրեթէ:
2. Բնագրին մէջ «թանիկ-զատ» է = մարմածին: «Զատ»ը մեր մէջ այս նշանակութեամբ առանձին գործածուած չէ, այլ գեղեցիկ բարդութիւններ առւած է, ինչպէս պայտատ, հայրազատ որոց հետեղութեամբ ըսինք իշրազատ:
3. Այս «ազատան» կամ «ավատան» բառը, երեխ, հայերէնէ զատ ուրիշ ոչ մէկ հնդեւր. ճիւղին մէջ պահուած է որով և պահլաւի մէջ ալ անորոշ մնացած է իմաստը, ըստ որում մեր փարսի առաջ-

* Զէնդի և Փէհէվի մէջ ա ձայնը կամ շատ երկար և բաց է ա ի նման, կամ փակ և սեղմ ինչպէս պարզ ա աւելի է ի և մանաւանդ է ի հակելով զոր անձիշդ շինիր մեր՝ երբեմն է ով և երբեմն և ով տառափոխելը: Զէնդը երկուքին չամար ալ ուրոյն և ուրիշ նշանագիրներ ունի:

Նորդ Խօստանեարը ինքն ալ իւր Տայշ (գոհու թիւն) թարգմանութենէն գոհ չմնալով կը յաւելու ի լուսանցս թէ «այս բառին ծագումը յայտնի չէ»: Եթէ մեր գիտնական բարեկամը հայերէն իմանար, ուրախութեամբ պիտի տեսնէր անշուշտ թէ Հայերէնի մէջ թէ բուն բառը գոյութիւն ունի և թէ նշանակութիւնը ճիշդ և որոշ է եւ գործածուած տեղայն միակ յարմարը, «դիմել և ապաւինել առ Աստուած»:

De Harlez — “il fit un vœu à dieu,, Խօսքին բերմոնքին կը հետեի աւելի քան թէ բառին տիրական իմաստին:

Իսկ Փեշութան փարսի թարգմանիչը “prayed to God,, ըսկով իմաստին իմաստը կուտայ, ոչ բուն իմաստը:

4. Այս հասուածը Prof. De Harlez կ'իմանայ.

“Alors par reconnaissance et dévotion envers Zarathustra Spitama,,.

Մենք Փեշութանին թարգմանութիւնը աւելի հարազատ կը գտնենք որ է.

“As the nature of this boy was as good as that of Zarathust Spitman,,.

Քանզի թէ մեր և թէ Փեշութանին հետեւած օրինակները միապէս ունին

«Ադին դրուտ հիմին ի Զարդուշտ Սփիտաման» գոր մեր փ. թ. ը* կը հանէ.

* Փարսի թարգմանիչը:

از درست خیی زرتشت سپیان

(Զ. Ա. ի ուղղաբարոյութիւնը ունենալուն պատճառաւ) որ ծիչդ մեր տուած իմաստն է:
 Հոս պիտի առարկուի թէ, երբ ծնաւ տղան, երբ
 հասկցուեցաւ բարքը բնութիւնը որ անոր համեմատ անոն արուած լինի. և թերես այս առարկութեամբ է որ Բելդ գիտնականը այս դարձուածը տուեր է իւր թարգմանութեան: Այլ սակայն գիտնալու է որ երկայն ժամանակամիջոցի անցում կամ լուսւթիւն մը կայ հոս ընդ մէջ ծընդեան եւ արբնութեան զոր այն ժամանակի ընթերցողները կրնային գիւրաւ ըմբռնել եւ իմանալ, գիտնալով աղզային փաղնջենի սովորութիւնը: Քանիզի նախնի Պարսից մէջ, ինչպէս առհասարակ արեւելեայ վէպերէ ալ կ'ուսանինք, անուանակոչութիւնը այնքան մեծ կարևորութիւն որ չէին երբէք կանխեր, ի տպայ տիոց, աճի զարգանայ և յայնժամ կ'ընտրէին անուն մը, սովորաբար այն երկնային անուններէն զորս կը ըելը այն երկնային էակներու պաշտպանութեան տակ գտնուել կը նշանակէր: Մեծ ուշադրութիւն և ընտրողութիւն կը պահանջէր այս գործողութիւնը. մանկան բարքը՝ միտումները՝ ներկայն և ապագայն նկատողութեան կ'առնուէր և ըստ այս պաշտպանողական զօրութեանց մէջ յարմարագոյնը կը փնտուէր: Շատ անդամ՝ ալ բուն

անունը թաքուն կը պահուէր, ինչպէս կ'աւանդէ ֆիրդուսին, հակառակ ազգեցութիւններէ պահպանելու համար մանուկը: Հետագայ հատուածին մէջ զոյդ ընդ անուանակոչութեան, ի խրատ եւ ի հրահանգ կոչուիլն ալ աներկբայապէս կը ցուցնէ թէ ի չափ հասած էր մանուկը:

5. Գիտենք որ «Համոզեմ»ը «ուսուցանեմ»ի մտօք շատ խորթ պիտի թուի, բայց, ինչպէս որ կանիւեցինք ըսել, մենք այս նրբութեանց կապուելու միտք չունինք, մեր նպատակն է պարսիկ բառին դիմացը նոյն և համազօր հայ բառը հանել, հոգչէ թէ մի քիչ փոփոխութիւն կրած լինի, թէ ձայնի թէ ձեի և թէ նշանակութեան մէջ:

6. Այս բարգութեանց մէջ «անդամեմ» կամ «ընդգամեմ» բառն է որ պարսկին անձիշ ին կը պատասխանէ, թէև բարգութիւն տուած չէ մեր մէջ: «Բարենգաճը» պահլաւի մէջ է որ հայցեալ՝ «կրպականդաճ» պէտք է գայ, «բարեխորհուրդի նշանակութեամբ. բայց սրյան մտօք կրպակ կամ քրպակ եղը մը չունինք մենք հայերէնի մէջ, թէպէտե բարեյիշատակ Արքայէլ Փաշա Փօրթուքալ նոյնը տեսնել կարծեց Եղիշէի «քրտիկար»ին մէջ որ ըստ մեզ «քրտար» ուղղելի է ինչպէս ժամանակին ցուցցած ենք Բաղմակպիկին մէջ:

իսկ երկրորդ բարգութեան մէջ երկնցած «դիտ-

- ուը» պարզապէս ամենում գիտցած կնահ ն է որ
մեր մէջ ալ հնագոյն ձեր պահած է և միշտ մեղք
նշանակութեամբ կը դորժածուի:
7. **Պարսիկ ձի զնտ**, և նու արմատներուն պա-
տասխանողը «կե» և «կենդ» է մեր մէջ, յորոց կեամ
և կենդանի, հայլն: Այս մասնաւորութիւնը ցայտե-
ցընելու համար է որ «կեամ» գրաբար ձեր դոր-
ժածեցինք փոխանակ «ապրիմ»ի որ սովորական
բառն է այստեղ:
8. **Պահաւ բնտգիրն** է «վայեշնիկ» որ մէրկացեալ՝
«ավայեշն» կուգայ և որ «վայեստ, պայեստ, վա-
յետ, պայետ» ձերու ծնունդ կուտայ նոր պարս-
կերէնի մէջ: Զենք կարծեր թէ մեր «վայելը»
ասկէ տարբեր ծագում՝ մոռնեցած լինի: Այս բն-
անիքի մի ուրիշ անդամները լինել կը կարծենք
նաև մեր «պէտ» (նախագոյն ձե պայտ) և «պատ-
9. Այս համարը գաղղերէն և անդզերէն թարգմա-
նութեանց մէջ բոլորովին տարբեր տրաւած է:
Յիրաւի, Հառէզը, անցեալի միայն սեփականե-

“A cause de ce qui n'est point arrivé n'aie ni peine,
ni chagrin,,.

և Փեշութան.

“For things that cannot be obtained (by thee) show
no sorrow or grief.,,

Այսինքն

- «Այն բանը որ ձեռք չես կրնար բերել, ա-
նոր համար մի տրտմիր և գանգատիր»:
- Շատ տարօրինակ է այս զանազանութիւնը: Մեր օ-
րինակը սակայն տարակոյս բնաւշիբցներ մեր հաս-
կացողութեան ճշգութեանը մասին որում և փար-
ասի թարգմանութիւնը կ'երաշխտուրէ՝ ունենալով
այս կذշտե ֆրամոշ կն և այս նամաց աստ նիշ և նիտար մի-
քեշութանի հետևած օրինակն ալ աչքի առջեւ ու-
նինք յորում ուրիշ տարբերութիւն չենք նկատեր
բաց ի այն որ, մինչ մերը հապտատական կը յօ-
րինէ բանը, առաջին պարբերութեան մէջ, նորայն
«մի» արդելական մաւելցնելով հակառակին կը
փոխէ իմաստը, և կընէ «Անցեալը մի մոռնար»:
Մնացած մասը բոլորովին համաձայն է:
10. **Բնագրին մէջ «վատահ»ի երկու ձեւեր գործած-**
ուած է «վատար» և «վատախ-ան», այն է «վրա-
տահ» որ տեղի կուտայ կարծերու թէ «վատահը»
«վատար» ձեէ մըն ալ անցած է որ մեր մէջ չկայ,
գոնէ այս ձեսիվ, այլ ունինք «վէտ», «վսեար (վր-
աեր)», «վսեամ (վսեմ)» որ նոյն իմաստներու շուր-
ջը կը յածին, որոնցմէ «վէտ»ը մեզ բուն նպա-
տակարմարը թուեցաւ «վատահ»ին հետ լծոր-
դելու:
11. **Պէլ.** «ավսպար» և (պ=պ) «ապսպար» որոյ բայն
«ապսպարիյտէն» որ նոր պարսկերէնի մէջ տուած
է սարշ և որ անայլայլ մնացած է նաև

մեր մէջ ապսպար ձեի տակ, միայն թէ նշանակութեան մի թեթև այլազանութիւն կայ. յանձնուիլ ենթարկուիլ առումները որ հոս տիրող են մեր մէջ գործածական չեն, կամ գաղրած են լինել:

Գաղղերէնը՝ բնագրին սեմական «նէփշմէն» (անձ) բառին յարելով կը թանձրացնէ իմաստը, ըսելով

“Ne livre pas ton corps en servitude.,,

نفس ով գիտենք որ անսպատճառ մարմին չհաս կըցուիր արևելեայց մէջ, այլ հոգի եւ մարմին, մարդ, ինքնութիւն, անձ, ինչպէս գեղեցկապէս ունի մեր լեզուն:

Փեշութանը լակոնաբար ըստած է

“Do not submit to,,

12. «Յասում»ը կը զնենք խելմ կամ հելմ ի հանդէպ, ցամ արմատով: Առարկուի թերեւ թէ իւ և ց Բայց ասոր նման օրինակներ այնչափ շատ են լեզուն մէջ, ինչպէս յետոյ ուրիշ աշխատութեան մը մէջ պիտի ցուցնենք, որ, մեզ համար կաս-

13. Գաղղերէնը աւելագրութիւն մը կընէ հոս.

14. Գաղղերէնը գարձեալ կը հեռանայ մեզմէ՝ աճեց նելով խօսքը.

“Ta femme, ta descendance, tes concitoyens et ta propre personne,,.

15. Ոյս բառը որ այժմ պահլաւի մէջ «պասխան» կը կարգանք, աւելի հին և բարձր ձև մը կենթադրէ, պահպանութեամբ տի, ինչպէս է մեր բառին մէջ: Հիւլշմանը իրաւամբ բատիս(h)ուան, բատախան ձեւերը կուտայ իբրև նախատիպ ձեւեր, և հեռի չէ արգարե որ, իբրև վերջին եղր սեղման, ունենանք բատ (պատ) որ կը մեղմանայ ի այ և մէկ կողմէն, և ի սխն միւս կողմէն, իւ բըր ոտն կամ հետեւորդ մտն խօսքի յորմէ եւ նոր ձին չափ : Ոյս գէպքին մէջ տը պահուած է մեր մէջ. կան ուրիշ գէպքեր ալ ուր մեղմացած յ ով կը ներկայանայ, ինչպէս, նոյն համարին մէջ, «պայման» (چան) որ պահլաւին մէջ «պատման» է:

16. Նոր լեզուները թարգմանութեան ինչ ինչ պարագաներուն մէջ շատ խեղճ են: Բարգութեանց եւ ածանցմանց գերաստիճան ընդունակութիւնը՝ հին լեզուներուն և ի մասնաւորի մերինին, մի այնպիսի անհամեմատ գերազանցութիւն տուած է որ ամենէն ընդարձակ՝ ցրիւ և տարածուն իմաստներըն ալ մի ամենասեղմ՝ կոկ և կուռ ձեւի տակ մարթ է ամփոփել, ինչպէս հոս այս «գժակն» ասացուածը զոր պահլաւ բաշտ ի հետեւորութեամբ կազմեցինք և որոյ համար գաղղ. թարգմանիչը կ'ստիպուի “au mauvais oeil,, ի պէս երկար բացատրութեան գիմել:

17. «Պատուհաս» և «պատիժ» բառերուն համար տես կարնամակ եր. 48: Այս տեղ ալ զղղ. թարգ-մանութիւնը մերինէն երանդով կը տարբերի ը-սելով.

"Ne sois pas avide d'exercer des représailles (des châtiments) contre les hommes.,,

որ պարզապես «պատժել մի սերեր», կամ «պատժելու կողմը շատ մի գնար» ըսել է. մինչդեռ մեր ընթերցուածը պատժելը չարգիկեր, այլ ահճաւական հաշիներ (ոխ, քէն, ևայն) չխառնել կը պատուիրէ արգարութեան գործի մէջ:

18. **Այս** համարը բառական մուլթ է «ուրուն» կամ «ուրուան» բառին պատճառաւ որ թէ ոդի կը նըշանակէ, թէ անձ (Կարնամակ եր. 70 և 133), թէ շարժում և թէ ակումբ՝ ժողով։ Հսու հաւանական իմաստը հոգի կը թուի, սակայն եւ այս մասին անհամաձայնութիւն կը տիրէ թարգմանչաց մէջ։ Գաղղիականը կը դնէ.

"Ne commets point d'acte nuisible à une âme,"
и þ ծանօթութեան լուսաբանելոց

"Ne commets d'hostilité contre âme,,
Փեշութան, ըստ Հայկակի.

"Ne combats pas contre (ton) âme.,,

«Հոգւոց մէջ պայքար մի մղեռ»

اندر روان پیکار مکن
վասն որոյ, ուշուր = հողի առմամբ, մենք ալ ահու-

19. Պահլաւի մէջ իոն = բարի, և հետ կամ Հյութ = բար.ք,
բարոյ.ք, որով իոն - հետ = բարեբարոյ (եր. 1. ծան.),
20. Այս համարին վրայ ալ տարածայնութիւն կայ:
Փեշութանը կրաէ.

"To prevent your meeting with heavy disaster war, be in great dread of revengeful persons and, if you can, avoid them.,.

Պատերազմի մէջ մեծամեծ աղետից առաջքն առնելու համար մեծապէս զգուշացիր քինախնդիր մարդոցմէ, և եթէ կրնաս, հեռի կաց անոնցմէ;)
Մեր փ. թ. բ կը դնէ.

به نبرد بارگران بر تو نباشد بسیار ترس

Այսպիսի զանազանութիւն չկրնար ուրիշ կերպ մեկնուիլ, բայց եթէ ընթերցուածոց տարբերութեամբ: «Պատերազմ» բառը սակայն երկուքին մէջ ալ այնպէս կարգացուեր և նոյն իմաստով առնուեր է, մինչ գաղղերէնը կը տարաձայնի:

"Du poids lourd d'une malédiction (injuste) prononcée contre toi n'aie point grande crainte,,

Կամ այն է որ պահլաւ գրչութեան յոռութեան
և նմանակազմութեան պատճառաւ շփոթուեր է
իմաստը և կամ թէ բառը խանդարեալ էր իւր
օրինակին մէջ, անենալով ՆԱ ՊԵՏ ՎՈՒՄ
նակ թւ ի, ուր ինչպէս կը տեսնուի, նշանախեցի
մը հաղիւ նշանարելի տորբերութիւն միայն կայ:

ՄԵՐ ԽՈՍԿԵԱՐԻՆ տուածն ալ զերծ չէ երկդիմութենէ, քանզի այսպէս ալ կընայ հասկցուիլ թէ «պատերազմի մէջ չափազանց երկիւղը քեզ ծանըր բեռ չինի».

ՄԵՐ ԽՈՏԱԳՈՒՄԸ մեզ ամենէն բանաւոր և համոզիր երկցաւ:

21. **ՍԽԱԼԺԱՄՔ գրուած են. ծանօթութիւն չունին:**

23. **ԲՆԱԳՐԻՆ** سوکند خوردن ر որ ارեելեայց յատուկ ասութիւններէ մին է, ինչպէս առ մեզ զան ըմպեւմ և տճ. **أیچوک** عن نساجیն, երկի, տարօրինակ ըմբումներու տեղի տուեր է, ինչպէս կը հաւասարէ Հառլէզ.

"Les termes pehlévis correspondent au persan sôk and khordan que l'on a voulu traduire: manger le sokand, en donnant à ce mot le sens de safran: et l'on se base sur le mot khôr-dan, manger. Mais khordan s'emploie très-souvent avec le seul sens de "subir.", et "faire,, rel est: subir l'épreuve de l'eau bouillante,,.

24. **Այս համարն ալ շատ մութ է և ընթերցուածոց մէջ երկի, մեծ տարբերութիւններ կան.**
De Harlez **ը կ'ըսէ**

"Quand tu désires t'établir maître de maison emploie comme intermédiaire un proche, homme d'autorité (de valeur).

Եւ ՓԵՇՈՒԹԱՆ՝ զոր թարգմանաբար կը յիշէ Հառլէզ.

"Quand tu veux marier une femme, emploie comme entremetteur . . . et fais lui faire la demande.,, և թարգմանիչը կը յաւելու փակագծի մէջ.

[ce qui n'est pas].

ԵԹԷ ուրիշ variante ներ չկան խօսքին մէջ, քար գայթակղութեանը ԶԷԶԷ (հուզինակ) բառ կը ներկայանայ զոր այցի կը հանէ մեր փ. թ. ը և ինչք՝ ստացուածք՝ հարստութիւն կը թարգմանէ, ծանօթաբանելով միանգամայն որ մի քանի օրինակաց մէջ «ընտրեալ», «արգոյ» խմասով առնուած է:

ՊԻՎՐՀԱՆԸ որ գտնուած պարսկերէն բառագրոց մէջ ամենէն ճոխը և վստահելին է, յետ յայլ եւ այլ դէմս շընկելոյ զբառդ, կը յաւելու, «կնոջ ապրուստը ապահովող միջոցներ», այսինքն ինչք՝ գոյք՝ հասոյթ՝ վաստակ, վերջապէս ինչ որ ընտանիւաց ապրուստը և բարեկեցութիւնը կ'ապահովէ:

Գիտուած տեղույն նայելով իմաստի այս գերազանցապէս յարմարութեան և բնականութեան առջե մեզ այլ ևս աւելորդ թուեցաւ ուրիշ օտարոտի առումներու յարիլ յամելլը: Ամուսնանալ, տուն տեղ, կամ ըստ բնագրին՝ տանտէր (كحدا) լինել ուզողի մը համար, բնական է որ առէն բանէ առաջ մտածուելիքը ապրուստի ճամբան շիտկեն է:

25. «Բուն» այլ հողին կ'ակնարկէ. որպէս թէ ըսեր. եթէ գնած հողդ ժամանակ մը բերք բարիք (արդիսնք) ալ չտայ, քանի որ հողը հող է, հաստատոն եւ անկորուստ մայ (գետին), օր մըն ալ, լաւ մշակուելով, կ'արդառաւրի:

26. Այս տեղ պահանջարէն այսօն բառը թէ մս داد ար կը կարդացուի (մէս դաստեար = մէծ տարիքոտ և թէ միստոր = միստուր = չքաւոր, խեղճ, աղքատ): Գաղզ. թարդմանութիւնը այս երկորդ գին յարած է.

“Ne te moque jamais d'un pauvre, car tu deviendrais aussi très-pauvre,,,

մինչ մենք աւելի ուղիղ տեսանք առաջինը նախընտրելու, առ բանաւոր պատճառաւ որ օր մը աղքատ լինել կամ լինելը մի պատահականութիւն է որ կրնայ ստուգուիլ կամ ոչ, մինչ ծերանալը բնութեան կարգի մի անհրաժեշտութիւն է յորմէ խուսափել կարելի չէ: Ապա անտարակոյս է որ խօսքը ծերութեան վրայ է. և ասոր մի ուրիշ ապացոյցն ալ որ, մի և նոյն բառը, մի քիչ հեռուն, 152 համարին մէջ, աներկբայելի բացարութեամբ տարիք մտքով գործածուած կը դանենք:

27. Ահա սոյն համարին փարսի տառականը

سخن تیز به نکرشنه * بکو چه سخنی هست کفتن خوب و (سخنی) هست نکاحد اشن (خوب) وان نکاحد اشن به از ان کفتست

ԴՐ ԴՎԴ Ը ԿԸ ՀՐՁԵ.

“Ne dis parole piquante qu'avec reflexion; car dire cette parole est bien et la retenir l'est aussi, mais la retenir vaut mieux que de la dire.,,

28. Խորենացին մէջ յիշուած է այս բառը ձիշդ այս ուղղագրութեամբ, իբր անուն կամ մականուն «Բարսումայի ուրումն զոր Փարսք Ռաստոհուն կոչեն»:

29. Այս համարին մէջ ալ կը տարածայնինք գղղ. ի հետ, նաև կրուսայ

“Ne tiens pas comme intendant un homme indigne de confiance.,,

ուր մերինին մէջ intendant ի խօսք չկայ:

زده مردرا بر استوار مدار

Եւ երկրորդ պարբերութեան «վաւերական»ը գղղ. Ը կը հանէ.

“un homm objet de louanges,,

Եւ փ. թ. ն ալ այնձ, երկուքն ալ քիչ մ'անորոշ և ընդհանուր: Հայերէնն է միայն բուն սեփական յատկութիւնը տուողը, վաշերական. այս

* نکرشن نکرشن ը Նکرشن բայէն հպ. ի մէջ հայ եւ եւ լայնարար խոր հետ շրջան կատ լինել կը նշանակէ:

ինքն արժանահաւաստ և վստահելի: իրաւ է, մեր
մէջ, որչափ գիտենք, այս վերջին մտօք մարդու
համար գործածուած չէ, կամ եթէ է ալ՝ խա-
փանուած է, սակայն սահկա արգելք մը չէ, բա-
ւական է որ բառը գոյութիւն ունի, առումներու
պէսպիսութիւնները ժամանակի գործ են:

30. Օրինակները հոս բոլորովին անհամաձայն կ'երե-
ւին, բանզի գղղ. ը կը դնէ.

“Ne te loue pas toi-même, mais sois porté aux
bonnes actions,,.

մեր բնագրիրը, փոխանակելով սեմական բառերը
պ. ով

خویشتزا مستا که فرارون گنشن هستی
զոր փ. թ. ը աւելի մեկնաբանելով կ'ըսէ.

از نیک کرداری خود تعریف مکن

այսինքն «բարեգործութիւնդ մի գոյաբաներ»,
իմաստ որ շատ պարզ և բնական է:

31. Բնագրին է «հուփարման» (هو فرمان) ՚ի հու
(բարի) և փար կամ փրաման (հրաման) է բարդ-
եալ որ կը նշանակէ բարի եւ արդար բաներու
հրաման տուող:

Այս տեղ ալ գղղ. ը կը զատուի մեզմէ՝ ըսելով.
“Sois obéissant aux préceptes et tu auras un heu-
reux sort,,.

Դաստուր Փեշութանը սակայն ճիշդ մեր իմաց-
ուածով կ'առնէ.

“Give good orders (to all) that your recompense
be good,,.

32. գաղղերէն

“Sois d'accord (avec les autres) et tu seras béni,,.

փ. թ. ը

يکان باش که واوريكان شوي

Փեշութանը մեզ աւելի կը մօտենայ ըսելով

“be consistent in your thoughts,,.

33. Բնագրին «ռաստ-գութիշն»ը զոր մեր լեզուն քա-
ջաբար հանեց «ռաստահուն»ով որ իսկ եւ ճիշդ-
բառն է, բաց ի «ուղղախօս»է բնաւ ուրիշ թարգ-
մանութիւն չփերցներ, ուստի կը տկարանայ գաղ-
ղերէնին justе ը, մինչ անզ զերէն truthful ը աւելի
յարմարագոյն է:

32. Կազմեալ ի տարերացդ խօ=հօ=հու (բարի) եւ
սրուալ=սրոզ=սրով (անուն, համբաւ), որով խոս-
րով կը լինի բարիանուն, բարեհամբաւ: Մեր
խօտաեարը անձահաբար بـ سـبـ մը կըստեղծէ,
անտեսելով առձեռն պատրաստ خـ سـرـ وـ ը:

35. Հարձ ու փորձ արմատները, ինչպէս ուրիշ առ-
թիւ պիտի տեսնենք, մի և նոյն պ. Մշ. ար-
մատի տարբեր ձևերն են: Այս տեսակ յեղանա-
կութեանց օրինակներ խիստ շատ ունինք:

36. Բն. (Տես կարնամակ եր. 110):

37. Այստեղ ալ հայերէնը իւր գերազանցութեամբ
կը փայլի ուրիշներուն վրայ, քանզի մինչդեռ ա-
նոնք թարգմանելու հարկին մէջ են առաւել կամ
նուազ յաջողութեամբ, Հայը բուն բնագիրը
կ'արտադրէ անթերի և անայլայլ հոյնութեամբ
։ ։ ։ = ավեշնոհար որ և ավեշնոհար:
36. Գղղ. “rendre hommage,” ը մեծարանքի և յարգան-
քի մի ընդհանուր բացառութիւն է որ մասնաւո-
րապէս այս կամ այն տարազին չակնարկեր, մինչ-
դեռ հոս գլուխ և մէջք թեքելու արևելեան սո-
վորութեան մը կ'ակնարկուի, ինչպէս յայտնի է
նաև հետագայ «քամակդ չկոտրիր» ասութենէն:
39. Կարի յանդգնութիւն պիտի թոււի անշուշտ մեր
Բայց «հանդամանք» (ք)ը ուրիշ ծագում չունի. ծայ-
րի եկամուտ յոքնականակերտ քն աղ կը ցուցնէ որ
բառը խելապէս պէլ. անձանան կամ աւելի հնով
անգաման է: իմաստներու հեռանալ և տարբերիլլ
ժամանակի՝ պարագաներու եւ այլ աղդակներու
արդինք է եւ արդէն, եթէ մանր միտ դրուի,
Առձեռն Բառարանի տուած «դարագայք, քննու-
թիւն» և այլն նշանակութեանց մէջ խորհուրդ և
խորհրդակցութիւն դաշտաբարը դոնել գժուար չէ:
40. Գղղ. ը տարբեր կը կարդաց այս համարը և կ'ըսէ.
“Car l'homme qui se conduit (vit) ainsi à l'égard
de son père et sa mère,,,. և քիչ մը վարը.
“Celui qui n'est point bon vis-à-vis de son père
et de sa mère,,.

- գեշտթանն ալ մեր իմացած կերպով առած է և
մեր բնագիրը շատ յատակ է այս մասին, գնելով
։ ։ ։ ըառ մը որ «կ'ապրին, կենդանի են» կը
նշանակէ, որով տարակոյսի տեղի չմնար թէ խօս-
քը հօր մօր կենդանի լինել չլինելուն վրայ է, ինչ-
պէս որ այրի եւ անպաշտպան կնոջ օրինակն ալ
զայս կը հաստատէ:
41. Այս «թշնամանք» բառին առթիւ դիտել կու-
տանք որ մեր «թշնամի»ն որ «թշնամանք»ի պէս
«թշնամ» արմատէ բղխածի երեսյթ ունի, տար-
բեր ծագում ունենալ կը թուի մեզ ը
աւելի յարմար կը տեսնենք լծորդելու անոր.
- թշնամ(անք) = دش نام = դժ, թշ, م = اینویان)
- թշنام(ի) = من دش = مان = مارդ():
- գժուարութիւնը միայն ման ին նաև եղած ըլ-
լայն է տեղափոխութեամբ տառից որ սակայն ոչ
անսովոր է եւ ոչ հազուագէպ: Այս վերըութեամբ միայն կը մեկնուին կատարելապես ի-
մաստի զանազանութիւնները:
42. Մասնաւոր ոճ մը (idiotisme) որով բոլոր կենդանի-
ները կ'ակնարկուին ջրային և ցամաքային, ջրայ-
նոց ձուկը եւ ցամաքայնոց թռչունները նշանակ
առնելով, ըսելու համար թէ չորերու քով թացերն
ալ կ'այրին, ըստ այնմ թէ,

آتش اندر بیشه چون افتاد نه ترماند نه خشک

- (ԵՐԲ ԿՐԱԿ ԻՒՆԱՅ անտառը, ոչ թաց կը մնայ ոչ չոր):
43. Գղղ. ին մէջ գէմքերու տարբերութիւն մը կը տեսնուի.

“Ne t'unis point à l'homme par qui ton père et ta mère sont offensés,,.

44. Այս «ն՛նգն» ալ այն բառերէն է որ թէև լծակից և զուգակից պարսկերէնին, սակայն հեռացեր են անկէ նշանակութեան կրած փոփխութեամբը: Յիրաւի շա ը կը նշանակէ պարսկերէնի մէջ ամօթ՝ խիս՝ շառագունանք, իսկ հայերէնի մէջ դաւ, խարդաւանանք, մեքենայութիւն, բոլորն ալ անշուշտ արարքներ որոնց համար կարելի չէ չ'ամաչել չխպնիլ: Մին գործողութեան տգեղութիւնը, միւսն անոր հետեանք ամօթը կ'արտայայտեն: 45. Հայերէնի քաջութեան մի այլ գեղեցիկ օրինակ է այս «ռոշնակն» կարճ և սեղմ և միանդաբայն ամենաճիշտ բառը իւր ազգական քաշն շտ ի դիմացը, ուր գղղ. ը satisfait ով կ'անցնի, և տառական մեկնաբանութեամբ ալ

“ayant l'œil brillant (de joie).

կանգնաշափ բացատրութեան դիմել կը պարտասորի:

46. Նոյն կարգէ է նաև այս «մարթով»ը զոր տալու համար՝ գղղ. ը շրջաբանական դարձուածներու կը հարկադրուի.

“Si même tu connais bien de nombreuses formules incantatoires contre les serpents,,.

47. Այս համարին վերջը և յաջորդին սկիզբը կը պակսին մեր օրինակին մէջ և այս համարէն ալ կը դադրի մեր զուգընթացութիւնը գղղ. ին հետ որ 31 համար իս կը զնէ, ինչպէս և մերը՝ 42, այլ տարբեր իրարմէ: Աս ալ կը ցուցնէ որ օրինակաց մէջ մեծ խանգարումներ և ձեռնմխութիւնք եղած են:

48. Պէտք ըստ ը զոր նպ. ի մէջ ճշն և օր կը տեսնենք, մեր մէջ «նուարդ» ձեռվ կը ներկայանայ և յատուկ անուն խիկ եղած: Եղական երկոյթ մը չէ այս, քանզի այն հին շրջաններու բոլոր յատուկ անունները, ինչպէս Հիւլզմանը լուսաբանեց մի քանին, արիական ծագում ունին և իմաստ կը պարունակեն. որպէս են. Տրդատ Տիրداد

Միհրդատ օր Հարամ Վահրամ Վահրամ Խոսրով

49. Սոյն բառը պէտք ի մէջ տարածուն և սեմախառն է (գատուան—բաւան—մաթուր) զոր ՀՅ և կը հանէ փ. թ. ը: Հայը Հայ = Պէտք և ՀՅ = մետր


ըլլած է, պահելով «մեհր»ին հին Mithr ձեր որ և յոյն գեմետրիստին մէջ կը տեսնուի:

Վերջ



ՎՐԻՒՊԱԿ

<i>Էջ</i>	<i>Տող</i>	<i>Սլուալ</i>	<i>Ուղիղ</i>
8	15	ԳԺԱԼԻՆ 13	ԳԺԱԼԻՆ 16
33	24	աւէն	ամէն
34	2	ըսեր.	ըսէր.
"	22	բացատրութեամբ	բացայայտութեամբ
35	24	نکرشن ը կրստ	առաջին բառը երկրորդին տեղը պիտի լինի.
37	1	կրշան (վարէն)	կրշան



Aug

1910

«Ազգային գրադարան



NL0147861

